ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան – 2025

ՀՏԴ
ԳՄԴ
Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Ես և շրջակա աշխարհը 3» աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար /Մանուկյան Մ.Ռ., Օհանյան Հ.Վ., Պետրոսյան Ս.Ս., Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Էդիթ Պրինտ, 2025. - 32 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.02.2025 թվականի 324-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Լ.Ա. Մնացականյան

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սարատիկյան Լ.Հ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ.Յու.

Հեղինակներ՝
Մանուկյան Մարինե Ռաֆիկի, մանկավարժական գիտությունների թեկնածու
Պետրոսյան Սյուզաննա Սամվելի
Օհանյան Հասմիկ Վրույրի

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Համակարգչային ձևավորում՝ Սարոյան Լ.Գ., Դավթյան Հ. Լ.

Սույն ձեռնարկի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երրորդ դասարանի «Ես և շրջակա աշխարհը 3» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 3» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ 12

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 31

ՆԱԽԱԲԱՆ

«Ես և շրջակա աշխարհը» առարկան, ըստ Հանրակրթության պետական նոր չափորոշչի, միասնացված (ինտեգրված) առարկա է, որի հիմքում ընկած են «Հասարակագիտություն», «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» ու «Հայրենագիտություն» առարկաների հայեցակարգային դրույթները՝ ապահովելով սովորողի ուսումնառության հաջորդ աստիճանների պարբերականությունն ու աստիճանականությունը:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի նպատակն է սովորողների մեջ ձևավորել պատկերացումներ բնության, դրա տարրերի միջև փոխազդեցության, հասարակության դերի, շրջապատող աշխարհի մասին, ինչպես նաև նպաստել սովորողների սոցիալականացմանը, ինքնաճանաչմանը, ինքնակազմակերպմանն ու ինքնադրսևորմանը:

Այսօր արդի մանկավարժության առաջնահերթություններից են մարդուն՝ որպես բարձրագույն արժեքի, ընդունումը, նրա ազատ զարգացումը, իր անձնային որակների, ընդունակությունների, ներուժի բացահայտումը, հետաքրքրությունների հաշվառումն ու պահանջ-մունքներն իրագործելու իրավունքների ճանաչումը:

Ելնելով այս տրամաբանությունից՝ «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման նպատակն է կրթել ֆիզիկապես և հոգեպես առողջ մարդու, որը կապրի ու կստեղծագործի մարդկանց ու բնության հետ ներդաշնակ՝ ձևավորվելով որպես խնայող, իրազեկ ու պատասխանատու անձ-քաղաքացի:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան լայն հնարավորություններ է ընձեռում սովորողներին իրենց շրջապատող իրականության՝ բնության և մարդկանց աշխատանքային գործունեության, կենսափորձի, առօրյայի վերաբերյալ գիտելիքներ կուտակելու, դրանք հարստացնելու, համակարգելու և գործնական հմտությունների վերածելու համար:

Ծանոթանալով իրենց շրջապատող առարկաներին՝ սովորողներն սկսում են ավելի մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրել, ընդհանրացնել և վերլուծել բնության երևույթները: Այդ բոլորն իրենց հերթին մարզում են սովորողի մտավոր ունակությունները, զարգացնում դիտողականությունն ու տրամաբանական մտածողությունը:

Առարկան ապահովում է միջառարկայական կապ մայրենիի հետ, նպաստում բանավոր խոսքի զարգացմանը, ակտիվ բառապաշարի հաստացմանը, ինչպես նաև նախադրյալներ ստեղծում ուսումնառության հետագա տարիներին բնագիտական առարկաների դասընթացի ուսումնասիրման համար:

Ուսումնասիրելով հանրակրթական ուսումնական հաստատություններում գործող «Ես և շրջակա աշխարհը 3» երկու դասագրքերի բովանդակությունը՝ մշակել ենք աշխատանքային գիրք-տետր, որում ծրագրային նյութը պարզեցված է և հարմարեցված՝ հաշվի առնելով սովորողների ընդունակությունները և կրթական կարիքները:

«Ես և շրջակա աշխարհը 3» աշխատանքային գիրք-տետրը մշակելիս առաջնորդվել ենք տարրական դպրոցի ծրագրի ավարտին հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված վերջնարդյունքների ապահովման պահանջով:

Կից մշակվել է նաև մեթոդական ուղեցույց, որի հիմքում տասներկուամյա հանրակրթական ուսումնական հաստատության 3-րդ դասարանի «Ես և շրջակա աշխարհը» առարկայի չափորոշչային և ծրագրային պահանջներն են, որոնք միտված են կրթական դաշտում հասանելի, որակյալ ու ներառական պայմանների ապահովմանը:

Մեթոդական ուղեցույցը նպատակ ունի լուսաբանելու աշխատանքային գիրք-տետրի կազմման սկզբունքները, աջակցելու առարկան դասավանդողներին՝ սովորողների առջև ծառացած ուսումնական խնդիրները հաղթահարելու, դրանք հնարավորինս

մատչելի, անցնցում և սահուն կազմակերպելու, նրանց անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու, ուսման մեջ դժվարություններ ունեցող սովորողների ուսումնառությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

Աշխատանքային գիրք-տետրի ծրագրային բովանդակությունն ընդգրկում է գիտելիքների այնպիսի շրջանակ, որը կարևոր նշանակություն ունի ուսման մեջ դժվարություններ ունեցող սովորողների մտահորիզոնն ընդլայնելու, աշխարհաճանաչողական գիտելիքներ ձևավորելու և զարգացնելու գործում (կենդանի, անկենդան բնություն, ընտանիք, դասարան, դպրոց, համայնք, առողջ սնուցում, անվտանգ վարքագիծ և այլն):

Ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների պաշարն օգնում է սովորողին ճանաչել կյանքը սեփական դիտարկումների շնորհիվ, ինչպես նաև մեծացնում հետաքրքրությունը շրջապատող աշխարհի նկատմամբ՝ նպատակ հետապնդելով զարգացնել ու ակտիվացնել մտածական գործընթացները, ուշադրությունն ու հիշողությունը:

Աշխատանքային գիրք-տետրն ընդգրկում է բազմաբնույթ և բազմաշերտ առաջադրանքներ (Ես-ի ճանաչում, իրավունքների և պարտականությունների գիտակցում, անձնական հիգիենայի իմացություն, օրվա ռեժիմի ճիշտ կազմակերպում, առողջության պահպանում, աղետներից պաշտպանվելու, բնությանն առնչվող թեմաներ և այլն): Դրանք հարմարեցված են այնպես, որպեսզի հնարավորինս օգնեն ուսման մեջ դժվարություններ ունեցող սովորողներին յուրացնել ուսումնական նյութն ու արդյունավետ կիրառել այն՝ նպատակ ունենալով նրանց մեջ սերմանել կարգապահություն, կարգ ու կանոնը պահպանելու սովորություն, կոկիկություն, պարտաճանաչություն, զարգացնել կամքի ուժ, գործը մինչև վերջ հասցնելու կարողություն և այլն:

«Ես և շրջակա աշխարհը 3» աշխատանքային գիրք-տետրի բովանդակային նյութը խարսխված է «Ես», «Ես և մարդիկ», «Ես և բնությունը», «Ես և տիեզերքը» հիմնական գաղափարների վրա:

Այս թեմաներն ուսումնասիրելիս սովորողը ոչ միայն ծանոթանում է նշված միջավայրերի առանձնահատկություններին, այլև զարգացնում միջավայրի և օրգանիզմների անքակտելի կապի գաղափարը. բույսերի ու կենդանիների հարմարվածությունը տվյալ միջավայրի՝ այգու, անտառի, բնության և այլ պայմաններին, մարդու կողմից բնության պահպանումն ու նրա բարիքների արդյունավետ օգտագործումը՝ դրանք իր առողջությանն ու անվտանգ կենսակերպին նպատակաուղղելուն:

Սովորողը ծանոթանում է այդ հիմնական գաղափարների տրամաբանությունից բխող թեմաներին, կատարում սոցիալա-կանացմանը նպաստող, իր առօրյան արտացոլող, իրական միջա-վայրից և իրողություններից բխող գործնական առաջադրանքներ՝ արդյունքում ձեռք բերելով որակներ, որոնք նրան պետք են և՛ իր առօրյա գործունեությունը կազմակերպելիս, և՛ ամբողջ կյանքի համար՝ օգնելով հնարավորինս արագ հարմարվել շրջապատին ու միջավայրին:

Ուսումնական նյութի մատչելի հաղորդմանը, կարճ գործողություններով, փոքր զարգացող քայլերով կատարելուն, պարբերաբար կրկնելուն միտված առաջադրանքները ***հարմարեցված*** ռեսուրսներ են՝ ուղղված ուսման մեջ դժվարություններ ունեցող սովորողի կրթական կարիքները բավարարելուն:

Առաջադրանքների պահանջները ձևակերպված են կարճ, բարդանում են աստիճանաբար. գիրք-տետրում հանդիպում ենք նույն առաջադրանքի ***ա, բ*** և որոշ դեպքերում՝ նաև ***գ*** կետերով ձևակերպված պահանջների:

Ընդգրկված առաջադրանքները հիմնված են ***ծանոթից անծանոթը*** դիդակտիկական սկզբունքի վրա: Դրանք կրում են գործնական բնույթ և զուգակցվում ***Հավելվածից*** բերվող ռեսուրսները համապատասխան տեղերում փակցնելու կամ լրացնելու հանձնարարականներով: Նման մոտեցումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողին հնարավորություն է տալիս ակտիվորեն ներգրավվել դասագործընթացում:

Առաջադրանքների իրականացման շղթայում կարևոր բաղադրիչ է **անդրադարձը՝** հետադարձ կապի ապահովմամբ:

Առհասարակ, անդրադարձը դիտարկվում է որպես գործունեության և նրա արդյունքների վերլուծություն, ուստի այն կարելի է իրականացնել ոչ միայն ցանկացած առաջադրանքի, այլև ենթաթեմայի կամ թեմայի ավարտին:

Անդրադարձն ուղղված է գիտակցելու, հասկանալու անցած ճանապարհի յուրաքանչյուր քայլը: Անդրադարձի նպատակը սովորածի վերաբերյալ իմաստային շղթայի ստեղծումն է, կիրառված միջոցների, մեթոդների, ուսումնառության եղանակների, արդյունավետության մակարդակի չափումը:

Հատկապես կարևոր է հետադարձ կապի կիրառումը սովորողի համար, քանի որ այդ դեպքում նրա հետ կազմակերպվող գործունեության հետագա քայլերն ավելի պարզորոշ ու նպատակային են դառնում, նպաստում ճիշտ, գրագետ պլանավորմանն ու գնահատմանը:

Գիտենք՝ դասը պլանավորելիս ուսուցիչը մշտապես ունենում է լրացուցիչ ուսումնական նյութեր ստեղծելու կամ դրանք սովորողների ամենատարբեր կարիքներին հարմարեցնելու կարիք: Աշխատանքային գիրք-տետրում ներառված առաջադրանքներն օգնում են ուսուցչին այդ հարցում. նա կարող է դրանք կիրարկել՝ ըստ սովորողների կարիքների և ընդունակությունների:

Բնությանը վերաբերող առաջադրանքների կատարումը (դիտարկումներ, զբոսանքներ) ցանկալի է կազմակերպել էքսկուրսիաների և զբոսանքների ձևով՝ ապահովելով կենդանի շփում բնության և մարդկանց հետ:

Պետք չէ մոռանալ, որ գործ ունենք կրտսեր դպրոցականի հետ, ուստի անհրաժեշտ է նրան հնարավորություն տալ բնության առարկաներին և երևույթներին ծանոթանալ նաև անմիջական շփման միջոցով, ուղղակիորեն:

Նշենք, որ առաջադրանքների կատարման համար ժամկետներ չեն նախատեսվում (սովորողն ինքն է թելադրում իր աշխատաժամանակը, որը կարող է խիստ տարբեր լինել՝ պայմանավորված ուսման մեջ դժվարություններ ունեցող սովորողի անհատական կարիքներով և առանձնահատկություններով), սակայն հարկավոր է պահպանել առաջադրանքների շարունակականությունը՝ սահմանված վերջնարդյունքներն ապահովելու համար:

Դրանց ծանրակշիռ մասը վերաբերում է սովորողների ինքնաճանաչմանը և սոցիալական պարզագույն հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, նրանց կենսակերպն ու առօրյան առողջ և անվտանգ կազմակերպելուն (տե՛ս 1 - 64-րդ առաջադրանքները):

«Ես և շրջակա աշխարհը 3» աշխատանքային գիրք-տետրում առաջադրանքներին կից ներկայացված են բազմաթիվ **թեմատիկ նկարներ**, որոնք առաջադրանքներն ավելի պատկերավոր և ակնառու են դարձնում սովորողի համար, ինչպես նաև նպաստում դրանք պարզաբանելուն, ավելի զննական դարձնելուն, ուսուցանվող նյութի համակողմանի ընկալմանը, խոսքի, մտածողության, գեղագիտական ճաշակի զարգացմանը, և ունեն դաստիարակչական ներգործություն:

Նկարների դիտման արդյունավետությունն ապահովելու համար կարող ենք փոքրիկ զրույց անցկացնել, որի նպատակը պետք է լինի

սովորողների աշխատանքին որոշակի ուղղվածության հաղորդումը և առաջադրված նկարը ճիշտ և բազմակողմանիորեն ըմբռնելու համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը:

Սովորողներին հարկ է ուղղորդել մանրամասնորեն դիտել նկարները, անվանել այն առարկաները, որոնց հանդիպել են առօրյայում, ցույց տալ դրանց միջոցով կատարվող գործողությունները, գիտակցել այդ իրերի կիրառման անհրաժեշտությունը՝ արդյունքում տիրապետելով միջավայրում հարմարվելու և ապրելու սոցիալական պարզագույն կանոնների:

Աշխատանքային գիրք-տետրում կարևորել ենք նաև **շփման-հաղորդակցության** դերը՝ շեշտադրելով այն առանձնահատկությունները, որոնք հաղորդակցական սահուն գործունեության միջոցով ապահովում են բառապաշարի հարստացում, բառերի հետ աշխատանք, լսելու, ըմբռնելու կարողության և հմտության ձևավորում (տե՛ս QR ծածկագրերը):

Կան նաև **միասնացված/ինտեգրված** առաջադրանքներ, որոնք համալիր մոտեցում են ապահովում ուսումնասիրվող առարկաների շրջանակում (մայրենի, մաթեմատիկա, կերպարվեստ, տեխնոլոգիա): Այս նպատակին են միտված աշխատանքային գիրք-տետրում զետեղված որոշ առաջադրանքներ, որոնք օգնում են ճանաչել սեփական անձը, հաղորդակցվել տարեկիցների հետ՝ ապահովելով տարբեր կարողունակությունների ձևավորմանն ուղղված վերջնարդյունքներ:

Այսպիսով, որպեսզի ուսուցիչը կարողանա արդյունավետ օգտագործել աշխատանքային գիրք-տետրը, հարկավոր է, որ նա քաջածանոթ լինի «Ես և շրջակա աշխարհը 3» առարկայական չափորոշչին և ծրագրին, մանրամասնորեն ուսումնասիրի ծրագրային պահանջները սահմանված վերջնարդյունքների համատեքստում, յուրաքանչյուր վերջնարդյունք դիտարկի դասագրքում ընդգրկված

առաջադրանքների, դրանցից բխող նպատակների ու խնդիրների շրջանակում. ի՞նչ անցնել, ինչպիսի՞ կարողություններ և հմտություններ ձևավորել, ի՞նչ արժեքներ փոխանցել սովորողին՝ նպաստելով առօրյայում համապատասխան վերաբերմունքի և վարքագծի դրսևորմանը:

Կարևոր և անհրաժեշտ պայման է, որ ուսուցիչը դասարանում ապահովի բաց միջավայր, որտեղ սովորողները ազատ գործունեություն ծավալեն, չվախենան սխալվելուց, համագործակցեն, սովորեն ու սովորեցնեն միմյանց:

«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 3»
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

«Ես ու իմ գործերը» ենթաթեման, որն առաջին հերթին և կրկին անդրադառնում է սովորողի Ես-ին (անուն, ազգանուն, տարիք և այլն), օգնում իրեն դիտարկելու իր առօրյայի, կատարած լավ ու վատ գործերի շրջանակում:

Ենթաթեման ընդգրկում է 24 առաջադրանք:

Սովորողի ուշադրությունը հրավիրում ենք գիրք-տետրի առաջին էջում զետեղված հանելուկի բովանդակության վրա: Ուղղորդող հարցերի միջոցով դուրս ենք բերում պատասխանը:

Ուղղորդող հարցեր.

- Ի՞նչ է անունդ:
- Ե՞րբ ես ծնվել:
- Ո՞վ է քեզ համար անուն ընտրել:
- Քեզ դո՞ւր է գալիս քո անունը:
- Քանի՞ տարեկան ես: Կարելի՞ է ասել, որ անունդ էլ ճիշտ այդ տարիքին է:

Մեկ անգամ ևս հիշեցնում ենք սովորողին իր անձնական տվյալների մասին (տե՛ս 2-րդ դասարանի աշխատանքային գիրք-տետրի «**Ստեղծի՛ր քո «անձնագիրը»**» առաջադրանքը):

Խորհորդ է տրվում հանելուկներին անդրադառնալ, երբ աշխատում ենք աշխարհաճանաչողական գիտելիքների որոշակի մակարդակ ունեցող սովորողի հետ (տե՛ս 29-րդ, 78-րդ առաջադրանք-ները):

2-րդ առաջադրանքը կատարելիս սովորողն ամբողջացնում է օրվա ռեժիմի մասին իր անցած գիտելիքները, քայլ առ քայլ մշակում

օրվա կանոնակարգը՝ նշելով այն գործերը, որոնք կատարում է օրվա ընթացքում:

Օգտվելով բառահումքից՝ սովորողը ***Հավելվածից*** բերում է գործողություն ցույց տվող բառեր և փակցնում «Իմ օրը» արտահայտության շուրջը:

Աշխատանքն ամբողջացնելուց հետո կարելի է օգնել սովորողին կարդալ մոդելավորած առաջադրանքը, հնարավորության դեպքում ցույց տալ այնտեղ նշված գործողությունները, համեմատել դրանք օրվա ընթացքում իր կատարած գործերի հետ. ի՞նչն էր, որ ինքը չէր անում, իր կատարած ո՞ր գործի մասին ի՞նչ կուզեր ավելացնել և այլն:

3-րդ առաջադրանքում զետեղված են նկարներ, որոնցում ներկայացված են տարբեր զբաղմունքներ կամ գործեր: Սովորողը պետք է նախ ուշադիր դիտի նկարները, ապա արտահայտի իր վերաբերմունքը դրանց նկատմամբ. յուրաքանչյուր նկարի կողքին կա դատարկ շրջան, որի մեջ սովորողը պետք է պատկերի դրական կամ բացասական վերաբերմունքը /հույզը այս կամ այն գործի նկատմամբ:

4-րդ առաջադրանքում սովորողը պատկերված ձեռքերի վրա փակցնում է այն գործերի անվանումները, որոնք սիրում է անել: ***Հավելվածում*** տրված բառերից ընտրում է այն բառերը, որոնք համապատասխանում են իր սիրած գործերին: Եթե հնարավոր է, ինքն է կարդում այդ բառերը, եթե ոչ, ապա ունկնդրում է, ընտրում համապատասխան բառը և փակցնում:

Ընտրել ենք ձեռքի պատկեր, քանի որ հիմնական գործերը մենք կատարում ենք ձեռքերի միջոցով:

Կարելի է կատարել նաև գործնական աշխատանք. սովորողը կարող է ձեռքերը դնել թղթի վրա, ուրվագծել, այնուհետև կտրել ուրվագծված պատկերները՝ ափերի մեջ գրելով համապատասխան բառերը:

5-րդ առաջադրանքում սովորողը պետք է տրված զբաղմունքներից առանձնացնի, թե որն է գործ, որը՝ ժամանց, և **Հավելվածից** բերելով բառը՝ փակցնի համապատասխան սյունակում:

Նշենք, որ գործն այն է, ինչը պարտավոր ենք անել, ժամանցը՝ այն, ինչը պարտավոր չենք, բայց ցանկանում ենք անել:

6-րդ առաջադրանքը հնարավորություն է տալիս սովորողին իր ընկերների հետ հանգստյան օրը պլանավորել: Խորհուրդ ենք տալիս նախ սովորողին հիշեցնել, թե շաբաթվա օրերից որոնք են ոչ աշխատանքային /հանգստյան օրերը՝ (շաբաթ, կիրակի) կամ բարձրաձայն թվարկել շաբաթվա օրերը՝ առանձնացնելով հանգստյան օրերը:

Ուշադիր դիտելով նկարները՝ սովորողը նախ ընտրում է ո՞ւր գնալ (կավագործության, կինոդիտում, պլանետարիում), ինչո՞վ գնալ (ավտոմեքենա, մետրո, ավտոբուս), ինչքա՞ն ժամանակ է նախատեսում ծախսել (1 ժ, 2 ժ, 3 ժ): Նկարների կողքին տրված քառակուսիներում սովորողը կատարում է նշումներ: Այնուհետև կարելի է խնդրել սովորողին՝ օգտվելով իր կատարած նշումներից՝ կապակցված խոսք կառուցել: Օրինակ՝ «Հանգստյան օրը ես իմ ընկերների հետ անցկացրել եմ Պլանետարիումում: Մենք տեղ ենք հասել մետրոյով: Պլանետարիումում եղել ենք 1 ժ»:

7-րդ առաջադրանք: Սովորողն ունկնդրում է փոքրիկ պատմություն, որը սովորեցնում է նրան չերկնչել դժվարություններից, լինել համառ և սկսած գործն անպայման հասցնել ավարտին:

Տեքստից հետո տրված են թեստային հարցեր, որոնք կօգնեն ստուգելու տեքստի ընկալման մակարդակը. սովորողը մի դեպքում կարող է ուսուցչի կարդալուց հետո ուղղակի հնչեցնել պատասխանը, մյուս դեպքում՝ կարդալ տրված պատասխանները, ընտրել և նշել ճիշտ տարբերակը:

Առաջարկվում է նաև լրացնել անավարտ նախադասությունը. սովորողը ուսուցչի օգնությամբ **Հավելվածից** բերում և փակցնում է այն

բառը, որը համապատասխանում է նախադասության հիմնական գաղափարին:

Ցանկալի է, որ սովորողը անգիր իմանա նաև «Ով աշխատի, նա կուտի» ասացվածքը:

8-րդ առաջադրանք: Սովորողը դիտում է նկարները և համապատասխան սյունակում գրում/փակցնում **Հավելվածից** բերած բառերը՝ ըստ դրանց ճիշտ կատարման հերթականության և համարակալման:

Առաջադրանքը նպատակ ունի մեկտեղելու և ամբողջացնելու օրվա ռեժիմին վերաբերող նախորդ տարիներին ձեռք բերած տեղեկույթը:

9-րդ առաջադրանք: Սովորողը նախ կրկնում է շաբաթվա օրերի անունները. ***Հավելվածից*** բերում և փակցնում է դրանք ըստ հերթականության: Մեկ անգամ բարձրաձայն կարդում է դրանք: Կարելի է առաջարկել նաև հաշվել օրերի քանակը՝ հիշեցնելով, որ «Շաբաթն ունի յոթ օր»:

Հաջորդիվ շաբաթվա օրերը կապում է այդ օրերի ընթացքում իր կատարած գործերի հետ՝ առանձնացնելով դրանցից իր համար ամենակարևորը:

10-րդ առաջադրանք: Սովորողը տրված աղյուսակում կատարում է նշումներ՝ (+ կամ -) մատնանշելով, թե շաբաթվա որ օրն ինչ գործ է անում:

Եթե սովորողը ունի կարդալու հետ կապված դժվարություններ, ապա կարդում է ուսուցիչը, նրա հետ քննարկում, և սովորողն ինքնուրույն նշումներ է կատարում համապատասխան սյունակում:

Ցանկալի է աշխատանքի ավարտին «կարդալ» աղյուսակը՝ վերլուծելով, թե որ գործին է սովորողը շատ ժամանակ տրամադրել, որ գործն է ավելի օգտակար և այլն:

Խորհուրդ ենք տալիս զրույցի ընթացքում վերհիշել ***երեկ, այսօր*** հասկացությունները, օրինակ՝ «**Երեկ** երկուշաբթի էր, ես ավելի շատ խաղացի, իսկ **այսօր** երեքշաբթի է, ես քիչ կխաղամ, քանի որ պետք է դաս սովորեմ» և այլն:

11-րդ առաջադրանք: Սովորողն ունկնդրում է փոքրիկ բանաստեղծություն ժամանակի մասին, որը սովորեցնում է նրան խնայել այն:

Ցանկալի է, որ սովորողը անգիր իմանա նաև «ժամանակը ոսկի է» ասացվածքը:

12-րդ առաջադրանք: Սովորողը կրկին վերհիշում է շաբաթվա օրերը՝ առանձնացնելով ***աշխատանքային և հանգստյան օրերը:*** Նա համեմատում է երկու առաջադրանքները. առաջին առաջադրանքում ներկայացված է կիրակի՝ հանգստյան օր: Նա արթնանում է ժամը 9.00-ին, նախաճաշում ժամը 10.00-ին. այդ ժամերը նշված են կից զետեղված ժամացույցի մոդելում:

Երկրորդ առաջադրանքում օրն աշխատանքային է. նա արթնանում է ժամը 7.30-ին, նախաճաշում ժամը 8.00-ին. այդ ժամերը ևս նշված են կից զետեղված ժամացույցի մոդելում:

Ռեժիմների տարբերությունը նրան օգնում է տարբերակել աշխատանքային օրը հանգստյան օրից:

13-րդ առաջադրանք: Տրված են ժամացույցի նկարներ, դրանց կից ներկայացված են գործողություններ: Սովորողը նախ պետք է կարդա գործողությունները մատնանշող բառերը, ապա դիտարկի ժամացույցի նկարները՝ բարձրաձայնելով դրանց ցույց տված ժամանակը: Հաջորդ քայլը պետք է լինի դրանք համապատասխանեցնելը. ո՞ր ժամին՝ ի՞նչ է անում:

14-րդ առաջադրանքում սովորողը պետք է ուշադիր դիտի նկարները, ըմբռնի դրանց բովանդակությունը, այնուհետև ժամացույցի «համր» նկարները լրացնի՝ ըստ նկարներում

արտացոլված գործողությունների տրամաբանության, օրինակ՝ նկարում ***երեխան քնած է:*** Դրա դիմաց՝ նկար-ժամացույցի ժամատախտակի վրա, պետք է նկարել սլաքներ, որոնք ցույց կտան ժամը՝ 21.00, 21.30 կամ 22.00:

15-րդ առաջադրանքի միջոցով խնդիր ենք դնում սովորողին պատկերացում տալ, թե ինչ է նպատակը և ինչ կարելի է անել իր նպատակին(ներ) հետևից գնալու համար: (Շ.Ե.Ի.Ն1-3 բ հստակեցնել նպատակը, նպատակին տանող ճանապարհն ու քայլաշարը, որոշում կայացնել):

Սովորողը դիտում է էջում զետեղված մի քանի մասնագիտությունների նկարներ, անվանում դրանք:

Այնուհետև ուսուցչի օգնությամբ կարող է լրացնել նախադասությունը՝ գրելով/ասելով այն մասնագիտության անվանումը, որն ինքը կցանկանար ձեռք բերել:

Կարելի է նաև զրույց սկսել նրա հետ՝ հետաքրքրվելով, թե ծնողներն ինչ մասնագետներ են, որտեղ են աշխատում, և արդյոք նա կցանկանա՞ր տվյալ մասնագիտությունն ունենալ:

16-րդ առաջադրանք: Սովորողը ծանոթանում է մարմնի մասերին, թվարկում՝ զուգահեռաբար մատնացույց անելով դրանք (այս առաջադրանքը կատարելիս հաշվի առնել սովորողի անհատական առանձնահատկությունները):

Առաջադրանքը ներառում է նաև մարմնի օրգան-համակարգերը պատկերող նկար՝ նպատակադրելով միայն դրանք ճանաչելու խնդիր:

Կարևոր հանգամանք: Հասնել նրան, որ սովորողը ընկալի, որ իր մարմնի բոլոր մասերն ու օրգան-համակարգերը գործում են փոխադարձաբար, համաձայնեցված:

17-րդ առաջադրանքում տրված են մարմնի մասերի նկարներ. սովորողը կարող է կա՛մ գրել, կա՛մ **Հավելվածից** բերել-փակցնել այդ մասերի անվանումները:

18-առաջադրանքը նպաստում է զգայարանների օգնությամբ շրջակա աշխարհը ճանաչելուն:

Կարելի է նաև գործնական աշխատանքներ կազմակերպել, որոնց միջոցով ուսման դժվարություն ունեցող սովորողին հնարավորություն կտրվի **շոշափել, հոտոտել, համտեսել, լսել, տեսնել** որոշակի առարկա՝ ակտիվացնելով զգայարանները:

19-րդ առաջադրանքում սովորողը ծեփոնապատում է «մարդուկի» պատկերը՝ հընթացս անվանելով մարմնի մասերը:

Խորհուրդ ենք տալիս օգտագործել տարբեր գույների ծեփոններ՝ մարմնի մասերը հստակորեն առանձնացնելու և ակնառու դարձնելու համար:

20-րդ առաջադրանքում զետեղված են զգայարանների նկարերը: Սովորողից պահանջվում է ***Հավելվածից*** բերել և փակցնել դրանց անվանումները համապատասխան տեղերում: Առաջարկել բարձրաձայն կրկնել պատկերն իր անվանումով: Օրինակ՝ աչք- տեսողություն, քիթ- հոտառություն և այլն:

21-րդ առաջադրանքում սովորողը փորձի միջոցով ծանոթանում է թոքերի աշխատանքին:

Կարելի է նաև խնդրել սովորողին ցույց տալ իր թոքերի տեղը և նրա հետ կատարել 1-2 շնչառական շարժում (ներշնչում-արտաշնչում):

22-րդ առաջադրանքում ներկայացված է ջրի շրջապտույտը բնության մեջ:

Ուսումնասիրել գծակարգը՝ քայլ-քայլ ներկայացնելով, որ ծովերի ու օվկիանոսների, գետերի ու լճերի մակերևույթից ջուրը գոլորշիանում է, գոյանում են ամպեր: Դրանք անձրևի կամ ձյան տեսքով տեղում են երկրի վրա, և ջուրը նորից վերադառնում է ցամաք ու օվկիանոսներ:

Կարելի է խոսել նաև այն մասին, որ Երկրի վրա եղած ջրի ընդհանուր քանակը չի փոխվում:

23-րդ առաջադրանքում ընդգծվում է ջրի կարևորությունը որպես նախ՝ անձնական հիգիենայի մասին հոգալու, մարմինը կոփելու անփոխարինելի միջոցի, ապա՝ ջրի/հեղուկիընդունումը՝ որպես օրգանիզմի կարևոր պահանջ:

Ցանկալի է զրույց վարել այն մասին, որ առանց ջրի կյանք չկա. ջուր կա ամեն կենդանի էակի օրգանիզմում: Ջրով հարուստ են մրգերն ու բանջարեղենը: Առանց ուտելիքի կարելի է ապրել շատ ավելի երկար, քան առանց ջրի:

Կարևոր հանգամանք: Կարելի է սովորողի առօրյա ներմուծել ջուր խմելու սովորությունը՝ իր հետ մշտապես ջրի շիշ ունենալու պահանջով:

24-րդ առաջադրանքում ներկայացված են ջրային սպորտաձևեր: Դրանք դիտարկելիս սովորողը ծանոթանում է որոշ մարզաձևերի, կարևորում ֆիզիկական ակտիվությունը և կոփման անհրաժեշտությունը՝ որպես առողջությունն ամրապնդող կարևոր գործոնների:

«Ուզում եմ առողջ լինել» ենթաթեման անդրադառնում է առողջ սննդի հիմնական բաղադրիչներին, օրվա սննդակարգին, բուսական և կենդանական սննդի մասին տեղեկատվությանը՝ բացատրելով, որ առողջ սնունդն է մարմնի աճի և զարգացման հիմնական գործոնը, ինչպես նաև եռանդի, ֆիզիկական ակտիվության աղբյուրը, օգնում է սովորողին գիտակցել, թե ինչ վտանգներ կարող են հանդիպել տանը, դպրոցում և փողոցում, բնության գրկում, ինչպես կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում:

Ենթաթեման ընդգրկում է 24 առաջադրանք:

25-28-րդ առաջադրանքների նպատակն է ամրապնդել ձեռք բերած գիտելիքները մրգերի և բանջարեղենի վերաբերյալ: Սովորողը ծանոթանում է մրգերին և բանջարեղենին, անվանում դրանք, դասակարգում՝ նշելով՝ տրված պտուղը մի՞րգ է, թե՞ բանջարեղեն:

Սովորողը կարող է մի դեպքում գրել առաջադրանքի պատասխանը, մյուս դեպքում կա՛մ ուրվագծված պատկերն ամբողջացնել, կա՛մ ինքնուրույն նկարել:

Թեման հարկավոր է կապել ջրի հետ առաջինը՝ պայմանավորված մրգերի և բանջարեղենի մեջ ջրի առկայությամբ, երկրորդը՝ որպես հիգիենայի կարևոր բաղադրիչ (լվանալ ձեռքերը, չուտել չլվացված միրգ, բանջարեղեն և այլն):

29-րդ առաջադրանքի ներքո զետեղված են հանելուկներ մրգերի և բանջարեղենի վերաբերյալ: Տրված են հանելուկների պատասխանների տարբերակներ, որոնցից սովորողը պետք է ընտրի և նշի ճիշտ տարբերակը:

30-րդ առաջադրանքի կատարումն ապահովում է միջառարկայական կապ մաթեմատիկայի հետ, քանի որ սովորողը բանջարեղենի պատկերներն ամբողջացնում է երկրաչափական պատկերներով:

Կարելի է նախապես անվանել բանջարեղենը (տաքդեղ, սմբուկ, սունկ, լոլիկ, գազար, կաղամբ), հետո՝ երկրաչափական պատկերները՝ (եռանկյուն, քառակուսի, հնգանկյուն, քառանկյուն), ապա համադրել պատկերները: Հընթացս կարելի է զրույց վարել այն մասին, որ օրինակ՝ «Սմբուկի պատկերն ամբողջացավ, երբ տեղադրեցինք քառակուսի պատկերը», և այդպես շարունակ:

31-40-րդ առաջադրանքները նպատակ ունեն ամրապնդելու ձեռք բերած գիտելիքները առողջ սննդի, սնվելու ճիշտ ժամերի, սեղանից բարեկիրթ օգտվելու վերաբերյալ:

33-35-րդ առաջադրանքներում սովորողն իր գործողությունները համադրում է ինչպես օրվա պահերի, այնպես էլ ժամացույցի ցույց տված ժամերի հետ:

Այս առաջադրանքը սովորողին օգնում է նաև պատկերացում ունենալ այն մասին, թե օրվա որ ժամին սնվելու որ ձևն է նախընտրելի:

Նա ժամացույցի «համր» մոդելի վրա նկարում է սլաքները, որոնք համապատասխանաբար ցույց են տալիս նախաճաշի, ճաշի կամ ընթրիքի ժամերը:

Կարելի է առաջադրանքի կատարումն ուղեկցել զրույցով. ի՞նչ է նախաճաշը (այն, ինչ ընդունում ենք առավոտյան), ե՞րբ ես նախաճաշում, ի՞նչ են ցույց տալիս սլաքները, ե՞րբ ես ճաշում, ի՞նչ են ցույց տալիս սլաքները, ի՞նչ է ընթրիքը, ե՞րբ ես ընթրում, ի՞նչ են ցույց տալիս սլաքները:

Առաջադրանքը նախատեսում է նաև վարժություն՝ օգտվելով ժամացույցի մոդելից՝ լրացնել անավարտ նախադասությունը:

Նշենք, որ **ժամացույցին** ծանոթանում են նաև «Մաթեմատիկա» առարկայից, և այստեղ սովորողի գիտելիքն ամբողջանում է՝ միաժամանակ ապահովելով միջառարկայական կապ:

41-րդ առաջադրանքի նպատակն է սովորողին տեղեկացնել երթևեկության կանոնների, լուսացույցի, փողոցում անվտանգ վարքագիծ դրսևորելու մասին:

Նա ծանոթանում է **մայթ, երթևեկելի մաս, լուսացույց** հասկացություններին, դրանց գործառույթներին. մայթը նախատեսված է հետիոտնի, իսկ երթևեկելի մասը՝ ավտոմեքենաների համար:

Հավելվածից բերել համապատասխան նկարները և փակցնել փողոցի «համր» մոդելի վրա. անցորդներին՝ մայթի հատվածում, ավտոմեքենաներն ու ավտոբուսները՝ երթևեկելի մասում և այլն:

42-րդ առաջադրանքի պահանջն է նախ կռահել հանելուկը լուսացույցի մասին, ապա սովորել դրանից օգտվելու կանոնները:

Լուսացույցից օգտվելու կանոնների իմացությունն ապահովում է մեր անվտանգությունը. սովորողը դիտարկում է նկարները և ցույց տալիս համապատասխան գործողությունները:

Հետադարձ կապի ապահովման նպատակով կարելի է ձեռքի տակ ունենալ երեք գույնի շրջան (կարմիր, դեղին, կանաչ),

բարձրացնել գույներից որևէ մեկը և խնդրել սովորողին ցույց տալ համապատասխան գործողությունը. կանգնի՛ր, սպասի՛ր, անցի՛ր:

Այս վարժանքը կօգնի ամրապնդել նաև գույների մասին սովորողի ունեցած գիտելիքները:

43-րդ առաջադրանքում սովորողն ինքնուրույն գունավորում է լուսացույցի նկարները՝ հընթացս անվանելով գույներն ու դրանց նշանակությունը երթևեկի ժամանակ;

44-րդ առաջադրանքում զետեղված դրվագային նկարաշարերի միջոցով սովորողները իրազեկվում են այն իրավիճակների մասին, որոնց հանդիպում են անզգուշության պատճառով (հրդեհ, վթար, պայթյուն, վնասվածքներ և այլն):

Առաջադրանքների կատարման արդյունքում նկարների կողքին տեղադրելով համապատասխան նշանը՝ նրանք սովորում են նման իրավիճակներին արագ արձագանքելու ձևերը:

45-րդ առաջադրանքն ավելի գործնական դարձնելու նպատակով հարկ է հեռախոսի մոդելի վրա ցույց տալ համապատասխան հեռախոսահամարները և խնդրել սովորողին դրանք մի քանի անգամ հավաքել՝ հընթացս կրկնելով, թե որ հեռա-խոսահամարը որ վտանգավոր իրավիճակի դեպքում պետք է արագ հավաքել: Հաջորդիվ՝ խաղարկել այդ իրավիճակը. ուսուցիչն ասում է բառը, օրինակ՝ **հրդեհ,** սովորողը հավաքում է համապատասխան հեռախոսահամարը կամ ձեռքի տակ ունեցած թվանշանները դասավորում ճիշտ հերթականությամբ՝ **1 01:**

46-47-րդ առաջադրանքների նպատակն է սովորողին իրազեկել վատ սովորություններից պաշտպանվելու կանոններին:

Դրվագային նկարաշարերի միջոցով ներկայացված են առօրեական **վնասակար** և **լավ** սովորություններ, որոնք սովորողին կօգնեն հասկանալու, որ իր առողջությունն ու անվտանգությունը

պայմանավորված են նաև վնասակարը բացառելու և ճիշտ վարքագիծ որդեգրելու մոտեցումներով:

48-րդ առաջադրանքում ամփոփ ձևով ներկայացված են առողջ կենսակերպ վարելու կանոնները, որոնց շուրջ հարկավոր է բացատրական աշխատանք տանել և պարբերաբար դրանց մասին հիշեցնել օրվա տարբեր պահերին:

«Ես և իմ ընկերները» ենթաթեման օգնում է հասկանալ սոցիալական նորմերը՝ գիտակցելով, որ մարդկանց հետ հարաբերությունները կարևոր են, որ այդ փոխհարաբերություններում նա պետք է լինի ազնիվ, բարեկիրթ, արդյունավետ շփվի իր ընկերների հետ, հարգի մեծերին:

49-րդ առաջադրանքում սովորողն ունկնդրում է «Ծիածան» բանաստեղծությունը, որը սովորեցնում է, թե ինչպես բարեկիրթ շփվել ընկերների հետ՝ արժևորելով ընկերության գաղափարը:

50-րդ առաջադրանքում սովորողը ***Հավելվածից*** բերած տառերով ստանում է ***ընկեր*** բառը:

Կարելի է ուղղորդող հարցերի միջոցով զրույց վարել այս բառի շուրջ: Մասնավորապես՝

- Դու ունե՞ս ընկեր/ներ/:
- Քանի՞ ընկեր ունես:
- Ի՞նչ անուններ ունեն քո ընկերները:
- Դու նրանց հետ որտե՞ղ ես հանդիպում:
- Ի՞նչ խաղեր եք խաղում:

Նույն տեղում՝ առաջարկվում է արտագրել **ընկեր** բառը:

51-րդ առաջադրանքում առաջարկում ենք սովորողին նկարել /լուսանկարել իր դպրոցը, այնուհետև լրացնել բաց թողած բառերը:

52-րդ առաջադրանքում սովորողը ***մարդուկին*** պետք է «դարձնի ***ընկեր»՝*** **Հավելվածից** բերելով և փակցնելով բառեր, որոնք բնութագրում և համապատասխանում են իր ընկերոջը:

Ուսուցիչը կարող է նախապես կարդալ բառ/եր/ը, բացատրել, հետո նոր դրանք բերել համապատասխան էջ և փակցնել:

53-րդ առաջադրանքում սովորողին առաջարկվում է շրջանների մեջ գրել ընկերների անունները և նրանցից յուրաքանչյուրին բնութագրել մեկ բառով:

Հուշում: Կարելի է օգտվել նախորդ առաջադրանքի **Հավելվածի** բառահումքից:

54-րդ առաջադրանքում սովորողը ***մարդուկին*** պետք է «դարձնի ***ընկեր»՝*** կից ներկայացված բառահումքից արտագրելով իր ընկերոջը բնութագրող կամ համապատասխան բառեր:

55-րդ առաջադրանքը նախատեսում է ընկերության մասին մուլտֆիլմի դիտում, որից հետո սովորողին առաջադրվում են հարցեր՝ ըմբռնումը ստուգելու նպատակով:

56-րդ առաջադրանք: Սովորողը նամակ է գրում արջին կամ եղջերվին: Նամակի հիմնական տեքստը գրված է. բաց է թողված մի քանի բառ, որոնք նա կամ կգրի, կամ **Հավելվածից** կբերի և համապատասխան տեղերում կփակցնի:

Կարելի է բառերի փոխարեն նաև նկարներ օգտագործել:

57-րդ առաջադրանքում սովորողը ուսուցչի օգնությամբ կարդում է ***նվագել, երգել, վազել, պարել*** բառերը, առանձնացնում իր սիրած զբաղմունքը/զբաղմունքները/: Աղյուսակում այդ բառերը գունավորված են՝ ավելի ակնառու դարձնելով և հեշտացնելով դրանց ընթերցումը:

Գրելու կարողության առկայության դեպքում ցանկալի է, որ սովորողն արտագրի այդ բառերը աղյուսակից (տե՛ս **բ** կետը):

58-րդ առաջադրանքում սովորողը դիտում է նկարները, արտահայտում իր վերաբերմունքը երեխաների արարքների վերաբերյալ:

59-րդ առաջադրանքում սովորողը դիտում է նկարները՝ դրանցից առանձնացնելով ավելորդը:

Ավելորդ նկարը զետեղված է կենտրոնում: Սովորողն այն պետք է վերցնի շրջանի մեջ՝ առանձնացնելով մյուս նկարներից:

60-րդ առաջադրանքում սովորողը դիտում է նկարները, համապատասխան նշանով (+ **կամ** -) արտահայտում իր վերաբերմունքը երեխաների արարքների վերաբերյալ:

61-րդ առաջադրանքում սովորողը «կարդում է» աղյուսակը, պատասխանում հարցերին՝ պարզելով, թե ով ինչով է զբաղված շաբաթվա ընթացքում:

62-րդ առաջադրանքում սովորողը պատկերված ճամպրուկում «տեղավորում է իրեր»՝ ճամփորդության մեկնելու համար: Նա **Հավելվածից** բերում է բառ-պատկերները և փակցնում ճամպրուկի մեջ: Հընթացս կարելի է փոքրիկ զրույց վարել.

- Ո՞ւր կցանկանաս մեկնել:
- Որտե՞ղ ես եղել:
- Ինչո՞վ ես գնացել:
- Ո՞ւմ հետ ես գնացել:

63-64-րդ առաջադրանքների նպատակն է օգնել հասկանալու իրավունքների և պարտականությունների կապը՝ մեկնաբանելով այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ այս կամ այն իրավունքը խախտելու դեպքում:

Սովորողը դիտում է նկարները, ուսուցիչը զրույց է վարում դրանց շուրջ.

- Երեխաները դասարանում են:
- Երեխաները սիրում են միրգ, բանջարեղեն ուտել:

- Երեխաները առողջ են սնվում:
- Երեխաները բժշկի մոտ են գնում, որ առողջ լինեն:
- Երեխաները խաղում են:
- Երեխաները ընտանիքով զբոսնում են:

Այնուհետև սովորողը **Հավելվածից** բերում է նախադասության պատրաստի կաղապարները, կարդում ինքնուրույն (կամ ուսուցիչն է կարդում) և փակցնում դրանք պաստառի վրա կամ տետրում՝ դրա համար հատկացված մասում:

Նույն քայլաշարով առաջնորդվում ենք նաև **64-րդ առաջադրանքի** դեպքում:

Վերջում առաջարկում ենք ձևավորել պաստառները:

Ճանաչենք մեր մոլորակը և նրա բնակիչներին ենթաթեման առարկայական չափորոշչում ներկայացված է ***Հետազոտենք մեր մոլորակը*** խորագրով: Սակայն, կարծում ենք՝ սովորողի համար ավելի դյուրին կլինի ենթաթեման ուսումնասիրել միայն այն ճանաչելու մակարդակում:

Նպատակն է օգնել սովորողին տարբերակել և բնութագրել **կենդանի** և **անկենդան** բնության օբյեկտները, դրանց փոխկապվածությունը:

65-րդ առաջադրանք: Կենտրոնում գրված է ***բնություն*** բառը: Սովորողը **Հավելվածից** պետք է բերի **արև, աստղ, քար, գետ, սար, թռչուն, բույս, կենդանի** բառերը, փակցնի՝ ամբողջացնելով բնության վերաբերյալ պատկերացումները:

66-րդ առաջադրանք: Սովորողը տրված նկարներից ընտրում և նշում է կենդանի բնության տարրերը՝ բացառելով **քարը** և **արևը:**

67-րդ առաջադրանք: Սովորողը տրված նկարներից ընտրում և նշում է անկենդան բնության մարմինները՝ բացառելով **մանուշակը** և **խխունջը:**

68-րդ առաջադրանք: Սովորողին կարելի է առաջադրել հետևյալ հարցերը.

- Ի՞նչն է ստեղծվել բնության կողմից (արև, հող, աստղ, ծով և այլն):
- Ի՞նչն է ստեղծել մարդը (շենք, ինքնաթիռ, հեռախոս, գիրք և այլն):

Այնուհետև լրացնել աղյուսակը՝ հետևելով օրինակին:

69-րդ առաջադրանք: Սովորողը կարդում կամ ունկնդրում է **«Կրիայի հովանոցը»** բանաստեղծությունը, պատասխանում հարցերին: Դրանց տրամաբանությունից ելնելով՝ լրացնում կամ **Հավելվածից** բերում-փակցնում է բաց թողած բառերը.

Ամպը **անկենդան** բնություն է:

Կրիան **կենդանի** բնություն է:

70-րդ առաջադրանքում սովորողը բույսի ուրվապատկերն է ստանում՝ միացնելով կետագծերը:

Ապա **Հավելվածից** բերում, ստացված ուրվապատկերի վրա փակցնում է բույսի մասերը՝ **արմատ, ցողուն, տերև, ծաղիկ** և անվանում դրանք:

Կարելի է զրույց վարել.

- Կարո՞ղ է երկրի վրա կյանք լինել առանց արևի լույսի, ջերմության:
- Կարո՞ղ են մարդիկ, կենդանիներն ապրել առանց ջրի:

71-րդ առաջադրանքում սովորողին առաջարկում ենք լուսանկարել իր շրջապատում գտնվող որևէ ծառ: Նա կարող է կամ այդ ծառի նկարը տեղադրել տետրում, կամ հիշողությամբ նկարել այն:

72-րդ առաջադրանքում սովորողը դիտում է նկարները և լրացնում բաց թողած բառերը՝ հետևյալ հերթականությամբ՝ **ծառ, թուփ, ծաղիկ :**

73-րդ առաջադրանքում սովորողը կարդում կամ ունկնդրում է **«Մի օրով էլ մեծացա»** բանաստեղծությունը:

Դիտարկելով աշխատանքային գիրք-տետրում զետեղված երեխայի տարբեր տարիքի լուսանկարները, նա հասկանում է բանաստեղծության գաղափարը և պարզում, որ բույսերը, ինչպես մարդիկ, ևս մեծանում են **(**աճում են**)**:

74-րդ առաջադրանքում սովորողը **Բույս-արև** (ջերմություն) կապը կարող է դիտարկել դասարանում թաղարի մեջ որևէ բույս աճեցնելու միջոցով: Սովորողը կարող է խնամել բույսը՝ ճիշտ ընտրելով դրա տեղը սենյակում/դասարանում: Նա կջրի բույսը, կմաքրի ավելորդ, չորացած մասերից/տերևներից և անմիջականորեն կդիտարկի դրա աճը:

Սովորողը **Հավելվածից** բերում, փակցնում է բառեր, որոնք ցույց են տալիս, թե ինչ է անհրաժեշտ բույսին աճելու համար:

«Ճանաչենք մեր մոլորակը և նրա բնակիչներին» բաժնում սովորողը ծանոթանում է կենդանական աշխարհի «բնակիչներին», անվանում այն կենդանիներին, որոնց նկարները տեսնում է գիրք-տետրի էջում (տե՛ս 72-րդ էջը):

75-րդ առաջադրանքում սովորողը յուրաքանչյուր կենդանու նկարը սլաքով միացնում է նրա համապատասխան ապրելավայրին: Մասնավորապես՝

- Ուղտն ապրում է անապատում:
- Սպիտակ արջն ապրում է Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում:
- Արջն ապրում է անտառում:

76-րդ առաջադրանքում սովորողը տրված կենդանիներից առանձնացնում է բույսերով սնվող կենդանիներին. **ճագար, կենգուրու, եղջերու:**

77-րդ առաջադրանքում սովորողը ծանոթանում է սնման շղթային. բույս, որն արմատներով հողից ստանում է սննդարար նյութեր, արև-ից ջերմություն, ծղրիդ, որը սնվում է բույսով, ծղրիդով սնվող մողես, մողեսով սնվող արծիվ:

78-րդ առաջադրանքում սովորողն ունկնդրում է հանելուկները և փորձում կռահել: Պատասխանները կարելի է ցույց տալ նաև տարբեր նկարներով՝ ընտրելու հնարավորություն ընձեռելով նրան:

79-րդ առաջադրանքում սովորողի հետ միասին մշակում ենք բնությունը պահպանելու վերաբերյալ կանոններ՝ դրանք ներկայացնելով պայմանանշաններով:

Սովորողը յուրաքանչյուր կանոնի դիմաց **Հավելվածից** բերում, փակցնում է համապատասխան նկարը:

«Մեր կանաչ-կապույտ մոլորակը» ենթաթեմային վերաբերող մի քանի մատչելի նյութերի սովորողը ծանոթ է դեռ 2-րդ դասարանից: Կարելի է ենթաթեմայի վերնագրի շուրջ փոքրիկ երկխոսություն կազմակերպել.

- Ինչո՞ւ ենք մոլորակն անվանում ***«կապույտ»:***
- Ինչո՞ւ ենք մոլորակն անվանում ***«կանաչ»:***

3-րդ դասարանում արդեն նախնական գիտելիք ենք տալիս աստղային երկնքի, Արեգակնային համակարգի, մոլորակների մասին: Բացատրում ենք, որ Արեգակի շուրջը պտտվող ութ մոլորակներից մեկը Երկիր մոլորակն է, պատկերացում ենք տալիս գլոբուսի՝ որպես Երկրի գնդաձև մոդելի մասին:

Օրինակների միջոցով բացատրում ենք, որ Արեգակի ջերմությունն է Երկրի վրա կյանքը պահպանող կարևորագույն գործոններից մեկը:

80-րդ առաջադրանքում սովորողը, դիտարկելով նկարը, նշված տեղում գրում է, թե օրվա որ պահն է պատկերված:

Գրելու դժվարություն ունենալու դեպքում կարելի է **Հավելվածից բերել** համապատասխան բառը (ցերեկ) և փակցնել նշված տեղում:

80-րդ առաջադրանքում սովորողը, դիտարկելով նկարը, նշված տեղում գրում է, թե օրվա որ պահն է պատկերված:

Գրելու դժվարություն ունենալու դեպքում **Հավելվածից բերել** համապատասխան բառը (ցերեկ) և փակցնել նշված տեղում:

81-րդ առաջադրանքում սովորողը, դիտարկելով նկարը, նշված տեղում գրում է, թե օրվա որ պահն է պատկերված:

Գրելու դժվարություն ունենալու դեպքում **Հավելվածից բերել** համապատասխան բառը (գիշեր) և փակցնել նշված տեղում:

82-րդ առաջադրանքում սովորողը անվանում է պատկերները՝ (Արև, Լուսին, աստղ) օգտվելով նկարի տակ գրված բառերից:

83-84-րդ առաջադրանքներում սովորողը **Հավելվածից** պետք է բերի և փակցնի նկարներ՝ ամբողջացնելով պատկերները. մի դեպքում՝ ցերեկվա երկնքի (արև,ամպեր), մյուս դեպքում՝ գիշերվա (աստղեր, լուսին):

85-րդ առաջադրանքում սովորողն ուշադիր դիտում է նկարը Արեգակի շուրջը պտտվող ութ մոլորակներով, որոնցից մեկի վրա գրված է Երկիր /մոլորակ/: Այնուհետև, օգտվելով գրածից, լրացնում է ***Երկիր*** բառը՝ ստանալով «Երկիր մոլորակը մեր տունն է» նախադասությունը:

Խնդրում ենք նրան կարդալ կամ ունկնդրելուց հետո կրկնել այդ նախադասությունը և ցույց տալ գլոբուսը՝ որպես Երկրի գնդաձև մոդելի (տե՛ս **86-րդ առաջադրանքի նկարը**):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Հ. Սվաջյան, Թ. Յու. Ազատյան, Լ. Ս. Բաբայան, Է. Ռ. Թադևոսյան, Մ. Ռ. Հարությունյան, Ա. Տ. Մանուկյան, Ս. Վ. Մուրադյան, Հ. Ա. Ադամյան, Հ. Վ. Օհանյան (2022) Արդյունավետ հարմարեցումներ, որակյալ կրթություն: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար/Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, Հայաստան, 142 էջ:
2. Ա. Հ. Սվաջյան, Թ. Յու. Ազատյան, Լ. Ս. Բաբայան, Է. Ռ. Թադևոսյան, Մ. Ռ. Հարությունյան, Ա. Տ. Մանուկյան, Ս. Վ. Մուրադյան, Հ. Վ. Օհանյան (2023) Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների նկարագիրը կրթության կազմակերպման գործընթացում: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար/ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, Հայաստան, 148 էջ:
3. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-4-րդ դասարանների առարկայական չափորոշիչ (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 28-Ն հրաման):
4. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի 3-րդ դասարանի առարկայական ծրագիր (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 50-Ն հրաման):
5. Լ. Ալեքսանյան և ուր. «Ուսումնական նյութեր»:
6. Լ.Ալեքսանյան և ուր. «Ես և շրջակա աշխարհը» մեթոդական ձեռնարկ:
7. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք 3-րդ դասարանի համար (հեղինակներ՝ Գ. Հովհաննիսյան և ուրիշներ), «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, Երևան-2024:
8. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք 3-րդ դասարանի համար (հեղինակներ՝ Ն. Պողոսյան, Կ. Մարգարյան), Երևան-2024:

Մանուկյան Մ.Ռ., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 3

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 150:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ.Մալյան 43